

ՊԱՆԳԵՉՈՒԹ

№ 19 (7183)

29 ԱՊՐԻԼԻ 1993 Թ.

ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ

ՀԻՆԳՇԱԲԹԻ

Օ Ր Ը

ԳԻՆԸ՝ 8 ՈՌԻՔԻ

ԳՈՐԻՍԻ ԹՐՁԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ © ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է 1994 ԹՎԱԿԱՆՈՑ

Հայաստանի Հանրապետության

ն ա խ ա պ ա հ ի

Հ Ր Ա Մ Ա Ն Ս Գ Ի Ր Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՇԽԱՏԱՆԵՐ

ԿԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՆԿԱԶԱԳՈՒՅՆ ՉԱՓԻ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ

ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԱՐՁԻ,

ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ, ՆՊԱՏՆԵՐԻ ՈՒ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԻ

ՉԱՓԵՐԻ ԻՆԴԵՔՍԱԿՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով գների ու սակագների աճի հետևանքով բնակչության սոցիալական պաշտպանվածության լրացուցիչ միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը, որոշում եմ.

1. 1993 թվականի ապրիլի 1-ից Հայաստանի Հանրապետությունում աշխատավարձի նվազագույն չափը սահմանել 3000 ուրվի:

Քնակչության ինդեքսավորման ենթակա մնացած եկամուտների երկամսյակով կիրառել հետևյալ գործակիցները՝

բյուջետային հիմնարկների աշխատողների պաշտոնային դրույքների համար՝ 1,5 (նշված գործակցով բարձրացումը տարածել նաև լուսավորության, առողջապահության, գիտության և մշակույթի հիմնարկների աշխատողների համար Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված բոլոր տեսակի լրացուցիչ վարձատրությունների վրա).

Ժամային տարիքային դրույքի նվազագույն չափերի համար՝ 1,5, որանք սահմանելով՝

աշխատաժամանակի նորմալ տեղության դեպքում՝ 17 ուրվի 66 կապեկ.

աշխատաժամանակի կրճատ տեղության դեպքում՝ 36—ժամյա աշխատանքային շաբաթ՝ 19 ուրվի 60 կապեկ.

30—ժամյա աշխատանքային շաբաթ՝ 23 ուրվի 66 կապեկ:

1993 թվականի մայիսի 1-ից Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված հեռավոր և սահմանափակված բնակավայրերում աշխատավարձի նվազագույն չափը սահմանել 3300 ուրվի: Հիշյալ բնակավայրերում բնակվող ֆազանցիների ինդեքսավորման ենթակա մնացած եկամուտների եկամտամաս կիրառել հետևյալ գործակիցները՝

բյուջետային հիմնարկների աշխատողների պաշտոնային դրույքների համար՝ 1,65 (նշված գործակցով բարձրացումը տարածել նաև լուսավորության, առողջապահության, գիտության և մշակույթի հիմնարկների աշխատողների համար Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված բոլոր տեսակի լրացուցիչ վարձատրությունների վրա).

Ժամային տարիքային դրույքի նվազագույն չափերի համար՝ 1,65, որանք սահմանելով՝

աշխատաժամանակի նորմալ տեղության դեպքում՝ 19 ուրվի 42 կապեկ.

աշխատաժամանակի կրճատ տեղության դեպքում՝ 36—ժամյա աշխատանքային շաբաթ՝ 21 ուրվի 56 կապեկ.

30—ժամյա աշխատանքային շաբաթ՝ 26 ուրվի 62 կապեկ:

Վերահիշյալ բնակավայրերում աշխատանքային կենսաբաշակների և միջին 17 տարեկան (սովորաբար և կրթաբարձր շտաբային երեխաների համար՝ միջին 18 տարեկան) երեխաների համար տրվող ամենամսյա նպաստների նկատմամբ 1993 թվականի մայիսի 1-ից կիրառել 10 % հավելում:

2. Հայաստանի Հանրապետությունում լրիվ աշխատանքային ստաժի դեպքում աշխատանքային կենսաբաշակների չափերին սահմանել 1000—ական ուրվի հավելում:

3. Ոչ լրիվ աշխատանքային ստաժի դեպքում տարիքային աշխատանքային կենսաբաշակներին, ոչ լրիվ աշխատանքային ստաժի դեպքում հաշմանդամներին տրվող կենսաբաշակներին, ծերության և հաշմանդամության սոցիալական կենսաբաշակներին, ինչպես նաև հաշմանդամ և հաշվառված միջին 16 տարեկան երեխաներին տրվող սոցիալական կենսաբաշակների չափերին սահմանել հավելումներ՝

ոչ լրիվ աշխատանքային ստաժի դեպքում տարիքային աշխատանքային կենսաբաշակներին, ոչ լրիվ աշխատանքային ստաժ ունեցող 1-ին խմբի հաշմանդամներին, ծերության սոցիալական, ինչպես նաև 1-ին խմբի հաշմանդամներին տրվող սոցիալական կենսաբաշակներին և հաշմանդամ հանաչված միջին 16 տարեկան երեխաներին տրվող կենսաբաշակներին՝ 700 ուրվի.

(շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԱՌԱՋՆՈՐԴՎԵՆՔ ԳՈՐԻՍԻ ՇԱՀԵՐՈՎ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ ԿԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ ՊԱՏԳԱՄԱԿՈՐՆԵՐԻ ԳՈՐԻՍԻ ՔԱՂԱՔՈՐԸՐԻ 6-ՐԴ ՆՍԱՇՐՋԱՆՈՒՄ, ս/թ ԱՊՐԻԼԻ 23-ԻՆ (*

Հարգելի պատգամավորներ: Մասնակցելով քաղաքային խորհրդի այսօրվա նիստին, ցանկանում եմ որոշ նկատառումներ արտահայտել մեր համատեղ աշխատանքի առնչությամբ և համառոտ տեղեկություններ հաղորդել ՀՀ պետնախարարի ու նրա աշխատակազմի գործունեության վերաբերյալ:

Պետք է ձեզ իրազեկ պահեմ՝ նախևառաջ, որ «Սյունիք-Չանգեզուր» պետական ծրագիրը գործողության մեջ է, և արդեն իսկ իրականացվում է: Կատարվող և կատարվելիք աշխատանքների մասին զրուցելու, քննարկումներ կազմակերպելու առիթներ դեռ կունենանք: Դրան կծառայեցվի նաև ծրագրի պաշտոնաթերթը, որը կհրատարակվի ս/թ մայիսի 1-ից:

Ծրագիրը ստեղծագործական գործընթաց է ապրում և շահագրգռված կազմակերպություններն ու քաղաքացիներն իրենց առաջարկություններով, դիտողություններով կարող են մասնակցել դրա վերջնամշակմանը:

Ներկայումս ձեռնամուխ ենք եղել տարածաշրջանում ներքին կարգուկանոնի, իրավակարգի ամրապնդմանը: Այդ բնագավառում ունենք բարի մտադրություններ, և արդեն որոշակի քայլեր են ձեռնարկվել:

Կարևորագույն հարցը երկրամասի պաշտպանունակության ամրապնդումն է, քանի որ առանց կայուն և հուսալի պաշտպանության, առանց ազգաբնակչության անվտանգության ապահովման անհնարին կլինի մեր առջև դրված խնդիրների իրագործումը:

Ընթացիկ հարցերի վրա ևս կծանրացնենք մեր ուշադրությունը: Ի վերջո, եթե հավուր պատշաճի չլուծվեն ընթացիկ, առօրինակ հարցերը, չեն լուծվի նաև մյուս՝ հեռանկարային խնդիրները:

Դրանց զուգահեռ կիրակաճացվի «Սյունիք-Չանգեզուր» ռազմավարական ծրագիրը, ըստ որի Գորիսում ևս կլուծվեն մի շարք հրատապ, հասունացած հարցեր:

Մասնավորապես, կկառուցվի ռադիոհեռուստատեսային աշտարակը, որը կապահովի կայուն, որակյալ հեռուստահաղորդումներ ոչ միայն Սյունիքում, այլև՝ Արցախում: Ուշադրություն կդարձվի ճանապարհների շինարարությանը: Դրանց մի մասն արդեն նախագծման փուլում է:

Տպագրվում է շարադրանք:

Արդյունաբերության մասին: Այսօր դուք պատրաստվում եք քննարկելու այդ հարցը: Հաճելի գուզադիպությամբ մենք երեկ հանդիպել ենք շրջանի արդյունաբերական ձեռնարկությունների ղեկավարների հետ: Պատրաստվել և նրանց է առաջարկվել հարցաթերթիկ, որի միջոցով կծնենք ճյուղում տիրող իրավիճակը, առանձին ձեռնարկությունների չափաերկու, պարապորտում գտնվելու պատճառները: Օրյակտիվ դժվարությունների առկայության դեպքում ձեռնարկությունները կստանան մեր աջակցությունը: Համապարփակ հիմնավորումներ լինելուց կնպաստենք դրանց վարկավորմանը:

Ասել և ասում եմ՝ կադրերի գնահատման միակ չափանիշը այսօրվա աշխատանքն է, առանց նկատի ունենալու անցյալում նրանց գործունեությունը: Ձեր աշխատատեղերում եղեք վստահ: Ձեռներեց, գործունյա մարդկանց տրվում է աշխատելու լայն հնարավորություն: Մենք սատար կըկանգնենք բոլոր այն կադրերին, ովքեր գործում են ի շահ մեր պետականության, ի շահ մեր ազգային զարթոնքի:

Ասեմ նաև՝ ձեր բարձրացրած ոչ բոլոր հարցերն են, որ անմիջապես օրյակտիվ լուծում կստանան: Դրանց մի մասը կլուծվի աստիճանաբար: Գորիսի, որպես ամբողջականության մասին: Շրջանի պայմանական բաժանումը՝

քաղաք, շրջան, մեզ համար ընդունելի չէ: Կա մեկ Գորիս, մեկ ամբողջական տարածք: Պլոտի խնդրեմ հարաբերությունների նորմալացում երկու խորհուրդների՝ շրջխորհրդի և քաղխորհրդի միջև: Ձեր ամենափոքր տարածալուծությունն անգամ թանկ է նստում ժողովրդի վրա: Մենք պատրաստ ենք աշխատելու և քաղխորհրդի, և շրջխորհրդի հետ: Մենք առաջնորդվում ենք մեկ շահով՝ Գորիսի, գորիսեցիների շահով: Կոչ եմ անում ձեզ՝ որքան հնարավոր է, արագ բարելավեք երկու խորհուրդների փոխհարաբերությունը: Ես ինքս պատրաստ եմ միջնորդ լինելու այդ գործում: Հակառակ դեպքում հարկադրված կլինենք վարչական մեթոդներով հարթահարելու խոչընդոտը:

Տեղական ռադիոցանցն իր հերթին պետք է նպաստի այդ հարաբերությունների բարելավմանը, շրջանի բարոյահոգեբանական կացության առողջացմանը: Ես որոշակի առաջարկություններ եմ ներկայացրել ՀՀ կառավարությունը՝ տեղական ռադիոհաղորդումների կարգավիճակը հստակեցնելու վերաբերյալ: Տեղական ռադիոհաղորդումները պետք է եթեր արձակվեն որոշակիորեն ֆիքսված ժամերի, շաբաթական երեք անգամ՝ օրական 15—20 րոպե տևողությամբ: Համոզված եմ, որ դա լիարժեք հնարավորություն կտա լուսաբանելու Գորիսում տեղի ունեցող իրադարձությունները: Անհրաժեշտության դեպքում, սահմանված ժամերից դուրս, հաղորդումների իրավունք կվերապահվի քաղաքացիական պաշտպանության և զինվորական կառույցների ղեկավարներին: Ինչ վերաբերվում է նստաշրջանների հեռարձակմանը՝ ինքներդ պետք է որոշում կայացնեք յուրաքանչյուր կոնկրետ դեպքում: Նրստաշրջանն այն միջավայրն է, որտեղ լինում են և պետք է լինեն կարծիքների բախումներ: Բանավեճեր: Ուղիղ հեռարձակման դեպքում, չպետք է մոռանալ, որ դրանք անմիջաբար փոխանցվում են ժողովրդին, հանրության մեջ առաջացնում նոր լարվածություն: Կարծում եմ՝ կարևորն ընդունված որոշումների հրոպարակումն է: Ինչ խոսք, կլինեն հարցեր, որոնց քննարկման ընթացքի հեռարձակումը անհրաժեշտություն է: Բոլոր դեպքերում որոշեք ինքներդ, նկատի ունենալով մեկ հանգամանք՝ նրստաշրջանների հեռարձակումը պետք է նպաստի հասարակության միասնությանը և ոչ թե՛ պառակտմանը:

Վերջում, կրկին անգամ հավաստում եմ՝ պատրաստ եմ աշխատելու բոլորիդ հետ: Ինքս խորապես անկուսակցական մարդ եմ՝ վերջնականապես, և պատրաստ եմ իմ հնարավորությունները, ուժն ու եռանդը ծառայեցնել ի բարոյություն մեր ժողովրդի: Առաջնորդվենք Գորիսի հերթի: Առաջնորդվենք Գորիսի տեղային շահերով՝ որովհետև հարկնապարտությունը ըսկրվում է տեղային շահերի գիտակցումով:

Յանկանում եմ միասնություն, ձեր միասնությունից է կախված ժողովրդի միասնությունը:

Հայաստանի Հանրապետության

Ն ա խ ա գ ա Տ Ի

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Գ Ի Ր Ը

(սկիզբը՝ 1-ին էջում)

ոչ լրիվ աշխատանքային ստաժ ունեցող, ինչպես նաև սոցիալա- կան կենսաբաշխական ստացող 3-րդ խմբի հաշմանդամներին՝ 500 ուրվի:

ոչ լրիվ աշխատանքային ստաժ ունեցող, ինչպես նաև սոցիալական կենսաբաշխական ստացող 3-րդ խմբի հաշմանդամներին՝ 300 ուրվի:

4. Կերակրողին կորցնելու կապակցությամբ երեխաներին նշանակ- ված սոցիալական կենսաբաշխական վճարելի փոխհատուցում այն հաշ- վով, որ՝

ա) ծնողներին կորցրած երեխաներին, ինչպես նաև մեկ ծնողին կորցրած այն երեխաներին, որոնց մյուս ծնողը առաջինը կամ երկրորդ խմբի հաշմանդամ է, նշանակված կենսաբաշխական շափերը յուրա- փանչուր երեխայի համար փոխհատուցմամբ հանդերձ կազմեն սույն հրամանագրի 1-ին կետով սահմանված նվազագույն աշխատավարձի 120 %-ը:

5. Կերակրողին կորցնելու կապակցությամբ ընտանիքի յուրա- փանչուր անաշխատունակ անդամին նշանակված սոցիալական կենսա- բաշխական վճարելի փոխհատուցում՝ 700 ուրվի: Բացառությամբ այն ան- ձանց, ովքեր «Հայաստանի Հանրապետության ֆաղափառների պետա- կան կենսաբաշխական ապահովության մասին» Հայաստանի Հանրապե- տության օրենքին համապատասխան ստանում են նաև այլ կենսա- բաշխական:

6. ԲՈՒՀ-երի ուսանողներին կրթաբաշխվող սահմանել ամսական 2475 ուրվու շափով, գերազանց առաջադիմություն ունեցողներինը՝ 3000 ուրվու, միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատու- րյունների սովորողներինը՝ 1800 ուրվու, 10 ամսից պակաս ուսուցման անոդությամբ պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսումնարանների սովա- բողներինը՝ 1500 ուրվու շափով: Անկախ գերատեսչական համակար- գից, ասպիրանտների կրթաբաշխվող սահմանել ամսական 4000 ուրվու, իսկ դոկտորանտներինը՝ 6000 ուրվու շափով:

7. Մինչև 17 տարեկան (սովորող և կրթաբաշխվող շտաբող երե- խաների համար՝ մինչև 18 տարեկան) երեխաների համար տրվող ամենամսյա նպաստի շափն ավելացնել յուրափանչուր երեխայի համար 110-ական ուրվով փոխհատուցում (հացի գնի բարձրացման կապակ- ցությամբ), սահմանելով այն 760 ուրվի:

8. Մինչև 17 տարեկան երեխ և ավելի երեխաներ (սովորող և կրթաբաշխվող շտաբող երեխաների համար՝ մինչև 18 տարեկան) ունեցող ընտանիքների համար մեկ երեխային տրվող ամսական նպաստի շափը սահմանել 950 ուրվի:

9. Մինչև երեխայի 2 տարին լրանալը, նրան խնամելու համար մասնակի վճարովի արձակուրդում գտնվելու դեպքում, ամսական եր- պաստի շափը բարձրացնել 350 ուրվով, սահմանելով այն 1000 ուր- վի:

10. Մինչև 17 տարեկան (սովորող և կրթաբաշխվող շտաբող երեխաների համար՝ մինչև 18 տարեկան) երեխաներ ունեցող միայ- նակ մայրերի ամենամսյա նպաստի շափը բարձրացնել 250 ուրվով, սահմանելով այն 750 ուրվի:

11. Երեխայի ծննդյան կապակցությամբ տրվող միանվագ նպաստի շափը սահմանել 6000 ուրվի:

12. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաս- տատված սպայական և կենսապայական կազմի համար պարենամբ- քերի փոխհատուցման ամսական շափն ավելացնել 450 ուրվով:

13. Ձեռնարկություններում աշխատանքի վարձատրության նվա- ճագույն շափն ապահովվում է սեփական եկամուտների հաշվին:

Քյուլեռային հիմնարկներում աշխատանքի վարձատրության և կրթաբաշխվող նվազագույն շափերի ավելացումն ապահովվում է բյու- շետային նախագումների հաշվին:

14. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Գերագույն խոր- ներդին վերանայել Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի 1993 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետության ֆա- ղափառների վստահից գանձվող եկամտահարկի դրույվաշափերի փո- փոխության մասին» որոշումը:

15. Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ տասնօրյա ժամկետում հաստատել սույն հրամանագրի 1-ին կետում նախատես- ված հեռավոր և սահմանափակ բնակավայրերի ցանկը, տասնօրյա ժամկետում սահմանել՝

հանրապետությունում սոցիալապես առավել անապահով ընտանիք- ների բացառությունն և հաշվառման միասնական կարգ՝ գործողության մեջ դնելով վերջինս 1993 թվականի հունիսի 1-ից:

սույն հրամանագրի 7-րդ կետով երեխաներին շփոխհատուցված գումարների հաշվին սոցիալապես առավել անապահով ընտանիքներին հատկացվող ընտանեկան նպաստների շափերը և վճարման կարգը՝ գործողության մեջ դնելով վերջինս 1993 թվականի հունիսի 1-ից:

16. 1993 թվականի ապրիլի 1-ից ուժը կորցրած ճանաչել՝ Հա- յաստանի Հանրապետության նախագահի 1993 թվականի հունվարի 13-ի «Հայաստանի Հանրապետությունում աշխատանքի վարձատրության ու կենսաբաշխական նվազագույն շափերի, բյուջետային հիմնարկների աշխատողների աշխատավարձի, կենսաբաշխական, նպաստների ու կրթաբաշխվողների շափերի ինդեքսավորման մասին» հրամանագրի 1-ին կետը, 2-րդ կետի 2-րդ և 3-րդ պարբերությունները, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ կետերը:

Հայաստանի Հանրապետության նախագահի 1992 թվականի սեպ- տեմբերի 4-ի «Սոցիալական կենսաբաշխական նվազագույն փոխհա- տուցումներ սահմանելու մասին» հրամանագրի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱԿ՝

Լ. ՏՆՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

Սրեան, 18 ապրիլի 1993 թ.

Ա Ն Կ Մ Ա Ն Ե Զ Ր Ի Ն

Անասնապահությունը շրջանի գյուղատնտեսության առաջատար ճյուղն է, բնակչության կենսական պահանջարկների բավարարման հիմնական աղբյուրներից մեկը: Ունենալ զարգացած, բարձր մը- թեքությամբ անասնապահություն, նշանակում է դրականորեն լուծել բնակչությանը մսով, կաթով, կարագով, պանրով, ձիով և անաս- նապահական այլ մթերքներով ապահովելու հարցը: Մինչդեռ, ինչպես վկայում են փաստերը, ինչպես այդ մասին ամփոփ տրվ- լիս են երկրաչափական մեր թերթի այս տարվա ապրիլի 8-ի թիվ 16-ում, գյուղատնտեսության այդ առաջատար ճյուղը առանձ- նապես վերջին 3-4 տարում խիստ վայրէջք է ապրում, շեշ- տակիորեն պակասում է անասնապահությանը, իջնում մը- թեքությունը, բարձրանում անասնապահական մթերքների հաս- տատարված ու շուկայական գները: Ընդդիմ զարգացման նը- կատմամբ առկա անտարբերությունը, ամենաթողությունը շարու- նակվելու դեպքում 1-2 տարի հետո կկանգնենք ավելի ծան- բարդին փաստի առջև, և լիովին անկարելի կդառնա անաս- նապահական մթերքների մատակարարումը բնակչությանը: Այս և դրանից բխող հարցերի հրատարակությունը նկատի ունե- նալով մեր աշխատակիցը հարցադրույց ունեցավ շրջանի անաս- նաբուծական պետական գլխավոր տեսուչ, գլխավոր անասնա- բուծ էՊԳԱՐ ԹՈՒՍՍՆՅԻ ՀՆՏ:

Պարոն Թոխսանց, Ձեր կարծի- քով որո՞նք են կարճ ժամանակա- հատվածում անասնաբուծի գլխա- ֆանակի կտրուկ կրճատման գըլ- խավոր պատճառները:

Ցավով է, բայց փաստ, որ, օ- րինակ, 1991 թվականին շրջանի բոլոր կարգի տնտեսություններում կար ավելի քան 28 հազար գլուխ խոշոր եղջերավոր անասուն: Հիմա այդ թիվը չի գերազանցում 18 հա- զարից: Ընդունենք, որ մոտ հազար անասուն ենթարկվել է հարկա- դիր սպանդի ու անկման: Իսկ ի՞նչ եղավ մնացած 9 հազարը: Ըստ ինձ, անասունների գլխաքանա- կի կրճատումն ուղիղ համեմատա- կան է սեփականաշնորհման գործըն թացում տեղ գտած ազդակող թերությունների հետ: Գյուղացին անասնատեր է դարձել, բայց չի լուծվել կերի հարցը: Գյուղական խորհուրդները կիսատ-պոտ են կազմել պայմանագրային այն պար- տավորությունները, որոնց պետք է հավատարիմ մնար անասնատեր դարձած գյուղացին:

Այդ ամենն այն տիպի հետևանք- ներն ունեցավ, որ գյուղացին, ա- ուսնց իրեն հաշիվ տալու, առանց անասնաբուծական կայանի թույլ- տվության, անարգել կերպով մոր- թոտեց, վաճառեց անասունները, որն է պատասխանատվություն չկրելով դրա համար: Այդ ցավով պրոցե- սը շարունակվում է նաև ներկա- լումս, իսկ գյուղատնտեսությանը, սե- փականաշնորհման տեղական հանձ- նաժողովները անտարբերությամբ են անցնում դրա կողքով:

Առավել տխուր վիճակ կարելի է արձանագրել ոչխարաբուծության, խոզաբուծության, թռչնաբուծության դժուր: Ընդամենը մեկ տարի առաջ հնձրենակ գյուղում հաշվվում էր 10 հազարից ավելի ոչխար: Հիմա այդ թիվը չի գերազանցում 1300- ից: Այդպես՝ նաև մյուս գյուղե- րում: Գաղտնիքը դարձյալ նույն բանում է՝ մարդիկ վաճառել, մոր- թոտել են ոչխարները:

Փաստորեն այնպիսի վիճակ է ստեղծվել, որ անասնատեր դարձած գյուղացին պետությանը չի ճանաչ- շում, անասնապահական մթերքներ չի վաճառում նրան: Մի՞թե սա նորմալ երևույթ է: Մինչդեռ սե- փականաշնորհման մասին օրենքը պահանջում է, որ գյուղացին իր ունեցած անասնապահական հա մեծատ պայմանագրային հիմունք- ներով միս, կաթ, բուրդ, անաս- նապահական այլ մթերքներ վա- ճառի պետությանը: Կարելի է ա- սել, որ այդ գործը մեռյալ կե- տում է գտնվում, ոչ գյուղացին է մթերքներին ճանաչում, ոչ էլ մը- թեքությունը՝ գյուղացուն: Իմ հա- մոզմամբ՝ մեղքի մեծ բաժինը գյուղ խորհուրդներին է, մթերքը կազ- մակերպություններին: Նրանք պար- տավոր են յուրաքանչյուր տարե-

բաստում ցեղային հատկանիշների անկման համար: Հետևությունը մեկն է՝ բարձր մթերքատու, հիվանդու- թյուններից զերծ անասնապահու- թյուն ունենալու կարևորագույն նախապայմաններից մեկը արհեստական սերմնավորումն է, որին, քանի դեռ ուշ չէ, պետք է բացառիկ ուշադրություն դարձնել: Ինչ խոսք, շուկայական հարաբե- թեքությունների անցման կապակ- ցությամբ դաշտերին բարձրացել է նաև սերմնավորման արժեքը: Մեկ կողմ կամ էգ մողին սերմնավորելու համար գյուղացին պետք է մոծի մոտ 900 ուրվի: Շատերը դժվար են համակերպվում այդ արժեքի

հետ և գերադասում են կողը կամ էգ մողին դուգավորել պա- տահական ցլիկներով: Այդպես վար լողները, մեղմ ասած, չեն գիտակ- ցում, որ, խնայելով 900 ուրվին, իրենք կրում են տասնյակ հազա- թավոր ուրվիները՝ վնաս, եթե նկատի ունենանք ցեղի անկումը, հնարավոր հիվանդությունները և այլ գործոններ:

Պարոն Թոխսանց, բարձրագույն փորձը վկայում է, որ նյալի գար- գացումը մեծ չափով պայմանավոր- ված է զոռանաբուծական մի- շոցներով, այն բանով, թե ինչպես են իրականացվում դրանք, ինչ- պիսի պայմար է տարվում վարակիչ հիվանդությունների կանխման

ուղղությամբ:

Ես լիովին համաձայն եմ ձեզ հետ: Կողմնակի ու պետական տըն- տեսությունների լուծարումից հետո գյուղերում փաստորեն զոռանաբու- թական ծառայություններ իրա- կանացվում է միայն պետական անասնաբուծական ֆիտոմի միջո- ցով, որի հաստիքները խիստ սահմանափակ են: Մինչդեռ այդ- պես չի կարելի: Գյուղական խոր- հուրդները, գյուղացիական և գյու- ղացիական կողմնակի տնտեսություն ները թեկուզ իրենց միջոցների հաշվին, պարտավոր են ունենալ և զոռոտխնիկ, և անասնաբուծ: Մեր՝ անասնաբուծական կայանը, միևնույն է, որքան էլ շանքեր գործարդի, իր սահմանափակ թվով աշխատողներով չի կարող բոլոր գյուղերը պահել ուշադրության կենտրոնում:

Եվ վերջին հարցը: Հանձնե՞ս ա- նասնաբուծական կայանի՞ շրջանում կա պետական մի ծառայություն, որը գրավում է անասնաբուծի հիվանդությունների հայտնաբերման, դրանց բուժման, ընդհանրապես բուժարժիվակտիկ միջոցառում- ների իրականացման հարցերով: Հետաքրքիր է՝ ինչպիսի՞ պայմաններ են ստեղծված կայանի նորմալ գործունեության համար:

— Կայանի առջև ծառայած են մի շարք պրոբլեմներ: Դեղորայքով, պատվաստանյութերով մեզ անչափ վատ են սպասարկում բավական չէ, երևանից դրանց փոխադրման հար- ցում վառելիքի պակասության պատ ճառով ամեն անգամ կանգնում ենք անասնի ղժվարությունների առջև: Բացի այդ, քանի որ մեր գործն անմիջականորեն կապված է գյու- ղերի հետ, շարունակ գրում ենք վառելիքի պահանջը, որի ձեռք բե- ռումը պրոբլեմ է դարձել: Անու- նաբուծության և աշխատողների սո- ցիալ-կենցաղային հարցերը:

Հոգսեր էլի ունենք, որոնց լուծ ման դեպքում կայանն անշուշտ կդառնա իր խնդիրների լուծման բարձրության վրա, էականորեն կը- նապաստի շրջանի անասնապահության զարգացմանը:

Հարցազրույցը վարեց Ն. ԲԱՐՍՆԱՆՅԱՆԸ

Տնտեսություն

վում: Ի՞նչ կարող եմ սասել այդ մասին:

Թող ինքնագովություն չլինի, եթե ասեմ, որ շրջանի անասնաբուծական կայանի լիարժեք և որակով կա- տարված բուժարժիվակտիկ մի- շոցառումների շնորհիվ վերացել են անասնաբուծի վարակիչ մի շարք հիվանդություններ՝ բրուցելոզը, տուբերկուլոզը և այլն: Դա շեշտում եմ այն բանի համար, որ նը- պաստավոր պայմաններ են ստեղծ- վել մայրական կազմի ստերիլու- թյան վերացման, բարձր մթերա- տվության ապահովման համար: Ցավով, նկատվում է հակառակը: Ստերիլության տոկոսը տարեցտարի բարձրանում է, իջնում կողմերի մթերատվությունը: Գաղտնիքը պետք է որոնել արհեստական սերմնա- վորման անբավարար կազմակերպ- ման մեջ: Այդ կարևորագույն ծառայության արդյունավետ գոր- ծունիության համար բարենպաստ պայմաններ չեն ստեղծվում, ան- հրաժեշտ միջոցներ չեն տրամա- գրվում: Եվ գործը տուժում է մեծ չափով: Գյուղերում էլ, միանգա- մայն ճիշտ եր նկատում, շատերը ստիպված են իրենց կովերն ու էգ մողինները ղուգավորել պատա- հական, շտուգված, դուցե և հի- վանդ ցլիկներով: Հնարավոր է, որ դա պատճառ հանդիսանա վարակիչ հիվանդությունների բռնկման, լիս- սելով դեռ այն մասին, որ դրանով արդեն իսկ հող ենք նախապատ-

ԵՂԵՌՆ - 78

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՑ՝ ԱՐՇԱԿ ԶՈՊԱՆՅԱՆԻՆ

Սիրելի Արշակ. Երկար ժամանակ է, ուզում եմ քեզ նամակ գրել, բայց այսօր վաղը ասելով ցարդ ուշացավ:

ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՏԻՊ ԱՍՍԱԿԸ

ուղղած: Արդեն հայ ազգը քեզ շատ բան է պարտական. դու՛ն էիր առաջինը, որ լավ ըմբռնեցիր, թե մեր ապագան հարթելու համար պետք էր նախ մեզ օտարներին ծանոթացնել, ցույց տալ, որ մենք կենսունակ ենք, լուստ որդեգիր ու կարապետ ենք խավար վայրերում, շինարար ենք... Եթե մեր մեջ տնականությունն ու միությունը պակաս է եղած, պատճառն այն է, որ ազատ շունչ չենք քաշել, նույնիսկ մեր իբր անկախության օրերումն իսկ՝ հալածվելով տգիտությունն ու խավարեն, ավերակն ու ավարեն, սրեն ու հրեն... բայց աննկուն բան ունինք մեր մեջ, մի ամուր հույս՝ դեպի ապագա լուստ կանթեղը հանած մեր հայացքները, դեպի այն կանթեղը, որ հայ ժողովուրդը, իր թագավորությունն ու իշխանությունը կորցրել են հետո, տարել ու կախել է բազմաբեղուն ու երկնադետ Արագածի գագաթը՝ երկնքի անտես առաստաղեն, անթել

կապով, որ մարդիկ՝ խավար ու ավարառու ձեռք տալ չը կարողանան և գոնե նորա լուստ նշույլը ցայտե մեր վերա և մեր ապագա կյանքը երազենք: Դու՛ն էիր առաջինը, որ մեր նախնայաց ստեղծագործ հոգին թղթերով ու գրքերով նկարեցիր ու ցուցադրեցիր օտար աշխարհի մեջ, քաղաքակրթության հարազատ գավակներին, որ մենք ևս իրենց շափողն ենք բռնել, մենք ևս իրենց ճամբան ենք քայլել, մենք ևս մեր ձեռքին լույս բռնել, և թեպետ, ջանացել են դևերը փչել ու մարել մեր կյանքը, բայց փչողներն են խորտակվել ու մենք դեռ մոխիրների տակ առկայծել ենք՝ ապավինելով գիտության ու կրթության, որ թեև մերն է եղել՝ իբր արևելքի զավակներ, բայց մեր ձեռքին դուրս է ելել ու Եվրոպայի լուսավորչարդ, քանի որ մեզ համար անծանոթ չէ մեր մտքի նախատիպը և կարողությունը, որ այժմ Եվրոպայից է, որ մեզ լուսավորում է, ինչո՞ւ չունենանք մեր իսկ լուստ ջահը՝ մեր ձեռքին: Դու՛ն էիր առաջինը, որ հրավիրեցիր հայի գեղարվեստական ստեղծագործությանց ծանոթացնելու քաղաքակիրթ աշխարհին... Արդ, հանգիստ վայելիր և ուրախացիր, ուժ առ և ուժ տուր, պինդ կեցիր, որ բարձրացած կարավոր ազատության ձգտող դիակներն ու ավիզները չը զարնվին ժայռին ու այս անգամ ալ փշրվին, որի վերջը թերևս կորստաբեր լինի մեզ համար: Ծավենք այժմ զգացմունքներն ու դատենք իրողությունը:

Ինձ այնպես է թվում, թե մենք մինչև նվազագույնով առաջին ու դրական քայլը չանենք, երբեք չենք կարող երկրորդի մասին մտածել կամ մեծամեծս ձգտել: Արդ, մեր երկիրն սկզբեն եղել է կոմպլեքսոս արջավող ու շրջափակ հզոր պետությանց աշխարհակալության ճանապարհի վերա և պահել է ցարդ նույն վիճակը: Մենք այժմ իրապես ոռուսաց շահի առական ենք. մեր երկիրն արդեն որոշված է, այսօր կամ վաղը ոռուս պետության բաժին դառնալու: Ուրեմն պիտի ձգտվենք մեզ ազատագրելու երկու կերպ. թեպետ և երկուքի վերջակետն էլ նույնն է, տարբեր ուղիով միայն: Առաջինն է առավելագույնը՝ ինքնուրույն ու անկախ լինելով իբր պատվար ցցվել ոռուս դիվանագիտության առաջ և երկրորդը՝ նվազագույնը՝ ապավինել Քեռի-Ռուսին և միաձուլվել հայությունն սահմանել: Երկուքն էլ նույնն է, բայց երկրորդն իրագործելի՝ շահերի նույնության վերահսկելով, իսկ առաջինը՝ անիրագործելի: Ռուս կառավարությունը ծայրագույն Արեվելքն տուժեց, ուրեմն ընդարձակման ճանապարհը այս կողմը մնաց. արդեն Պարսկաստանը բաժանված է իր կապիտալ Ազգլին և Ռուսիան միջև. այսպես, հայերը պարսկական լուծեն պիտի ազատին և միանան ոռուսացիոց և փոխադարձաբար ուժովմանարդ, հերթն եկել է մեզ արևմտահայերիս: Ես չեմ կարող մտքերս անցնիլ, որ ոռուս կառավարությունը իր

շահերը գոհե մեզ. զի նա չի կարող թույլ տալ, որ այս բաժինն ալեկի լավ վիճակ ունենա, քան իր երկրի հայերը. ուրեմն միշտ ձգտելու է պահել մեզ (եթե իրան չմիանանք) իրան կարոտ վիճակի մեջ, որպեսզի ապագա գրավման ձեռնարկն օտար հանդիսանանք: Ռուս թերթերն էլ ճիշտ այս կետն է, որ շարունակ շեշտում են, թե մեր փրկությունը կոելու և կոփելու ենք Փերպոլիսի (Պետերբուրգի) պարիսպներու դուներուն առջև. այս էր պնդել ժամանակին Լոռիս Մելիքովը, Գեվորգ Դ կաթողիկոսին զգուշացնելով (երբ սա ոռուս տաճկական պատերազմի ժամանակ, փրկությունը տեսնելով ու հուսալով տաճկներեն, գրեթե բացարձակապես սպասելիս է եղել տաճկներին Էջմիածնի մեջ): Արդեն քաջ գիտես, որ Ազգլին, Ֆրանսիո և Ռուսիո միության զբլխավոր նպատակն էլ այս էր: Ուրեմն չիք փրկություն արտաքո Ռուսիո: Պետք է նախ բոլոր հայերը խմբվեն մեկ տերության, մեկ օրենքի տակ, աճին ու զարգանան բարոյապես և նյութապես և ապա ժամանակն ինքն է, որ պիտի բերե մեզ մեծ ազատությունը. շտապելով, առաջինը չառած երկրորդ քայլի դիմելով, բոլորովին պիտի կորչինք: Ես չեմ հույս մի ունենաք, մի սպասեք. նորա ուղեղը քարե ժայռից է, զարգացման անընդունակ, լոկ փրշրվելու համար պիտանի և ոտքի տակը սալահատակելուն համար:

պետք է խաբվիք Եվրոպայի զանազան խոստումնալից խաբկանքներն, միանալու ենք և գործնական ճամբան բռնելու՝ ըստ իս, առաջին քայլն է բոլոր հայությունն ամփոփել ոռուսի իշխանության տակ, երկրորդ քայլն է տնտեսապես ու բարոյապես, զուտ ազգային, առանց օտարեն ու մեզ անմարս գաղափարներով առաջնորդվելու՝ զարգանալ. երրորդ քայլն արդեն ինքը ոռուս հեղափոխությունն է, որ պիտի անե, ոչ թե մենք. իսկ մենք օգտվելու ենք այդ քայլեն, սակայն պատրաստվելով, լեհերու պես զուտ ազգային շափող բռնելով: Եվ՝ ըստ պակաս մարդկային գաղափարները որքան որ ընտիր են ու փափագելի, բայց մեզ անպետք են. պաղ երկրի բույսերը մեր ջերմ արևին տակ կկիզվեն:

Ես վախ չունիմ, թե ոռուս կառավարության մեջ կրհամարվեք, որքան ալ որ հալինք, այնուամենայնիվ, մեր ինքնագիտակցությունը զարթնած է և եթե խելոք շարժվիք, կվաստակիք. ես այս կարծիքն ունիմ:

Ցանկանալով քեզ սրտագին եռանդ, ուժ ու քաջություն, մաղթիմ, որ մեզի նոր տարուն բերելիք նվերդ լինի համեստ ու համեղ բան:

Համբուրիվ և կարոտով, Զոպ

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

ՈՏՆԱՀԱՐՈՒՄ ԵՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՒ

1988 թ. սեպտեմբեր ամսին Շինուհայրի պետությունն արտաքին կից կազմակերպվում է «Կոմունա» կոոպերատիվը: Որպես դրա անդամ ուրիշների հետ միասին դառնում ենք նաև ինքս ու իմ կին Ռիմա Խաչատրյանը: Կոոպերատիվի նախագահ ենք ընտրում Կարոսյան Հայրապետյանին: Անցնում է շուրջ 2 տարի: Այդ ընթացքում կոոպերատիվն արտադրության զարգացման հաշվին կարողանում է մարել պետությունից վերցր-

Նարկ — ձեռնարկությունների հետ: Ստացված միջոցներից ԳԿՏ-ի որոշ անդամներին, այդ թվում նաև ինձ ու կնոջս, բաժին չի հասել: Անարդարությունն այն աստիճանի հասավ, որ անցած տարվա մայիս ամսին կինս ու ես ստիպված եղանք դուրս գալ ԳԿՏ-ից: Դրա դեպքում թյուրը վերջնահաշվարկը կատարել է հին գներով:

այդ հանգամանքը պարտավոր են հաշվի առնել ԳԿՏ-ի դեկավարները և տնտեսության կազմից դուրս գալու ցանկություն ունեցող անդամի վերջնահաշվարկը կատարելիս դեկավարվեն այդ սկզբունքով: Ինչո՞ւ պետք է ես ու կինս, որ մի շարք տարիներ աշխատել ենք «Կոմունա» կոոպերատիվում, այնուհետև «Հայք» ԳԿՏ-ում և մեր անհամազարկ վճարն ունեցել դրանցում, մեծ չափով տուժվենք, կրենք նյութական հսկայական վնաս:

Փ Ո Ս Տ

րած վարկերը, վճարել նախկին տնտեսությունից գնած գյուղմեքենաների վարձը: Հողի սեփականացման համար գործընթացն սկսվելուց հետո կոոպերատիվի բազայի վրա մեր համաձայնությամբ կազմակերպվում է «Հայք» գյուղացիական կոլեկտիվ տնտեսություն, որին որպես սեփականություն փոխանցվում է կոոպերատիվի շարժական ու անշարժ ունեցվածքը:

Գտնում են, որ ԳԿՏ-ի հիմնական միջոցները և առաջին հերթին գյուղատեխնիկան պետք է գնահատել ոչ թե նախկին, այլ ներկայումս գործող շուկայական գներով: Կարծում են, որ

ԻՄՇԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ ՇԻՆՈՒՀԱՅՐԻ «ՀԱՅՔ» ԳԿՏ-Ի ՆԱԽԿԻՆ ԱՆԴԱՄ

ԽՈՒՄԻՆՅԱՆ ԿՈՂՄԻՑ — Հարգելի Մ. Խաչատրյան, ավերոդ չենք համարում գյուղացիական կոլեկտիվ տնտեսության օրինակելի կանոնադրությունից, որ հաստատվել է 22 նոյեմբերի խորհրդի 1991 թ. մայիսի 9-ի թիվ 334 որոշմամբ, բառացի մեջ բերել հետևյալ համաձայն. «Գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունից դուրս եկող գյուղացիական տնտեսությանը կամ այլ անդամին (իրավահաջորդին) հատկացվում են կոլեկտիվ տնտեսության մեջ մտցնելիս ունեցած հողաբաժինը, արտադրության մյուս միջոցներն ու ավանդներ, փայտավճարը, ինչպես նաև աշխատանքային զբոյլը, և սահմանված կարգով կատարվում է վերջնահաշվարկ»:

Վարձում ենք՝ ամեն ինչ պարզ ու որակյալ ենք ստանում: Գրանց ենք 22 կառավարությունը չի ընդունել մեկ այլ որոշում կամ օրենսդրական ակտ, որով ուժը կորցրած համարեք այն շափաբաժիններ, որ նախատեսված են ԳԿՏ-ից դուրս եկող գյուղացիական տնտեսությանը կամ այլ անդամին (իրավահաջորդին) հատկացնելու հարցում: Այնպես որ, ձեզ մտահոգող հարցի կապակցությամբ ակնկալում ենք սեփականաշնորհման տեղական, շրջանային հանձնաժողովների, գյուղապետության, իրավապահ մարմինների արդարացի միջամտությունը:

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԿՅԱՆՔ

Հ Յ Ո Ւ Ր Ա Խ Ա Ղ Ե Ր

Վերջին շրջանում, երբ քաղաքը սկսել է ենթարկվել հրետակոծությունների, թվում է, մշակութային կյանքը որոշակիորեն աղքատացել է, դարձել առավել պասսիվ, գրեթե՝ չեզոք: Դա կարելի է ասել և մշակութային օջախների, և կրթական հաստատությունների, գրադարան-գրախանութ-մուսուր մանկապարտեզների մասին: Բարեբախտաբար, նույնը վերապահումով պիտի ասել քաղաքի պետական դրամատիկական թատրոնի մասին: Վերջինս ստեղծված պատերազմական իրավիճակում անգամ գրեթե չի դադարեցրել իր գործունեությունը: Միայն այս տարվա 1-ին եռամսյակում 28 անգամ թատրոնի ստեղծագործական կոլեկտիվը տարբեր ներկայացումներով հանդես է եկել քաղաքի և շրջանի գյուղերի հանդիսատեսների առջև: Մուտքագրվել է 33 հազար ուրբի՝ 27,5 հազար ուրբու դիմաց:

Վերջերս թատրոնի կոլեկտիվը հյուրախաղերով հանդես է եկել շրջանի Ակներ, Քարաշեն, Հարժիս, Քարահունջ գյուղերում՝ «Ձեզ հետ, Ձեզ համար» գրական-երաժշտական համադրությամբ: Վերջինիս ժամանակ հնչել են երգ, ասմունք, հումոր, մանրապատում, բեմադրվել տարբեր պիեսներից դրվագներ, միաժամանակ անց է կացվել դրամափրային խաղարկություն:

Թատրոնի դերասանները հիշյալ ներկայացումներով հանդես են եկել նաև հայոց երկրի սահմանները պահպանող զինվորների, բանտարկյալների առջև:

Նախատեսվում է զինվոր-հանդիսատեսի առջև պարբերաբար հանդես գալ նոր ներկայացումներով:

Թատրոնի կոլեկտիվը առաջին իսկ հնարավորության դեպքում հյուրախաղերով հանդես կգա հարևան շրջաններում և Արցախում:

Մ. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

